

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ
ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԿՋԲՈՒՆՔԸ և ԴՐԱ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ

ԱՌԱՐԿԱ Աշխարհագրություն

ՀԵՂԻՆԱԿ Ժաննա Բարսեղյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Շինուհայրի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Ս. Ալավերդյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Աշխարհագրության դասավանդման գործընթացում հայրենագիտական սկզբունքը և դրա կիրառումը նախագծային տեխնոլոգիայի միջոցով	5
Նախագծային աշխատանքի իրականացման փուլերը.....	10
Եզրակացություններ.....	17
Օգտագործած գրականության ցանկ.....	18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայրենի բնակավայրի բազմակողմանի ուսումնասիրությունը և հայրենագիտական նյութերի լայն օգտագործումը աշխարհագրության դասավանդման ընթացքում առարկան դարձնում են սիրելի բոլորին՝ աշխարհագրությունը ներկայացնելով իր ողջ խորությամբ, գեղեցկությամբ, գրավչությամբ ու մատչելիությամբ: Հայրենագիտական նյութերի կիրառումը էլ ավելի արդյունավետ է դառնում դասավանդման գործընթացում, եթե այդ նյութերը հավաքվել և մշակվել են հենց աշակերտների կողմից: Այդ հնարավորությունը տալիս է ուսուցման նախագծային մեթոդի կիրառումը: Այս մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ համատեղ գործունեությունը ընկալվում է որպես համագործակցություն, որը ենթադրում է կողմերի համահավասար մասնակցություն և փոխադարձ հարգանք:

Թեմայի արդիականությունն այն է, որ այնտեղ ներկայացվում է կրթական նոր քաղաքականության՝ այն է նոր չափորոշով սահմանված կարողունակությունների և վերջնարդյունքների ձևավորմանը նպաստող սկզբունքների և տեխնոլոգիաների կիրառման արդյունավետ մոդել: ՀՀ կրթական համակարգում իրականացվող արմատական բարեփոխումները վկայում են, որ ուսուցման պահանջվող որակի ապահովման հիմնախնդիրների լուծումը պայմանավորված է ուսուցման նորագույն մեթոդների կիրառումով: Գաղտնիք չէ, որ ուսուցման ավանդական մեթոդները, ավելի ճիշտ գիտելիքներ սերտել տալու մեթոդներն այսօր չեն կարող ապահովել ուսման որակ և ստեղծարար կարողությունների զարգացում: Դասավանդողներն այսօր ուսուցման մեթոդների ընտրության մեծ հնարավորություններ ունեն:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել հայրենագիտական աշխատանք կատարելու մեթոդաբանությունը նախագծային տեխնոլոգիայի կիրառման միջոցով և արդյունքում առաջարկել նախագծային աշխատանքի կատարման մեթոդական նմուշօրինակ, որը կարելի է կիրառել <<Հայաստանի աշխարհագրություն>> դպրոցական դասընթացի ամփոփման ժամանակ:

Հետազոտական աշխատանքի խնդիրն է ցույց տալ, որ մարդու գիտակցության մեջ որպես հայրենիք հանդես եկող հայրենի երկիրը, մանկությունից ծանոթ և

հարազատ բնությունը հայրենասիրական զգացմունքների ձևավորման աղբյուրներից են: Հարազատ երկրի զգացումը, ինչպես հայտնի է, սկսվում է այնտեղից, որտեղ դու ծնվել և ապրում ես: Մերը հայրենի երկրի, հարազատ բնակավայրի նկատմամբ ծնում է սեր հայրենիքի նկատմամբ: Չկա լավ ու վատ, սիրելի ու ոչ սիրելի ծննդավայր, ինչպիսին էլ որ այն լինի, միշտ ավելի սիրելի է, քան այլ վայրերը:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԿԶՐՈՒՆՔԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ

Հայրենագիտությունը որոշակի տարածքի տնտեսական, քաղաքական, պատմական, մշակութային զարգացման և բնական պայմանների բազմակողմանի ուսումնասիրությունն է: Հայրենագիտությունը, ըստ էության, տարբեր գիտությունների՝ աշխարհագրության, պատմության, բնագիտության, ազգագրության ամբողջությունն է, որը աշակերտներին հնարավորություն է տալիս դասարանական և արտադասարանական աշխատանքների միջոցով և ուսուցչի ղեկավարությամբ բազմակողմանի ու խորը գիտելիքներ ստանալ հայրենի բնակավայրի մակերևույթի, բնական երևույթների, կլիմայի, բուսական ու կենդանական աշխարհի, բնակչության, տնտեսության, պատմության, մշակույթի ու կենցաղի վերաբերյալ: Վերը թվարկած գիտությունների մեջ իր բովանդակությամբ և բնույթով հայրենագիտական ուղղվածություն ունի հատկապես աշխարհագրությունը, քանի որ հայրենագիտությունն ընդգրկում է աշխարհագրության գրեթե ողջ բնագավառը: [1, էջ 86]

Դպրոցական աշխարհագրության կարևորագույն խնդիրներից է սովորողների աշխարհագրական մտածողության ձևավորումը: Վերջինիս հիմքը համակարգային տարածական մոտեցումն է՝ իր տարբեր մակարդակներով՝ համամոլորակային, տարածաշրջանային և տեղական կամ հայրենագիտական: Հայրենի երկրի, երկրամասի, մարզի ու բնակավայրի խորն ու բազմակողմանի աշխարհագրական ուսումնասիրությունը տեղական փաստացի նյութերի միջոցով խորացնում է աշխարհագրական ընդհանուր դասընթացներից ստացված գիտելիքները բնության, նրա ամբողջական համալիրների, բնական առանձին բաղադրատարրերի և դրանց փոխապայմանավորվածության մասին[2, էջ 7]:

Սկսած 5-րդ դասարանի բնագիտության դասընթացից, որտեղ ուսումնասիրվում է աշխարհագրական թաղանթի ոլորտներները, դրանց բաղադրամասերն ու փոխադարձ կապերը, կարելի է անդրադարձ կատարել հայրենի բնակավայրի շրջակայքում գտնվող աշխարհագրական օբյեկտներին, այնտեղ

ընթացող բնական երևույթներին և դրանց միջոցով երեխաներին ավելի հասկանալի ու պատկերավոր բացատրել նյութը: Օրինակ, երկրի մակերևույթի հիմնական ձևերն ուսումնասիրելիս շատ կարևոր է, որ աշակերտները տարբերակեն հարթավայրերի և լեռների տարատեսակները, առաջարկեն օրինակներ Հայաստանից, այստեղ երեխաների ուշադրությունը հրավիրելով դասասենյակի պատուհանից երևացող Բարգուշատի լեռնաշղթայի վրա՝ կարելի է նրա օրինակով բացատրել լեռների տեսակները՝ ըստ բարձրության, հասակի և ծագման, կամ էլ, <<Գետեր>> թեման ուսումնասիրելիս կարելի է կամակերպել էքսկուրսիա մոտակա գետավազան, մեր պարագայում դա Որոտան գետի կիրճն է, և տեղում ծանոթանալ գետի մասերին [4, էջ 62] :

Հետագայում 6-րդ դասարանի §Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն՝ դասընթացում, որտեղ ուսումնասիրվում են մայրցամաքները, կիրառելով համեմատական մեթոդը՝ կարելի է անընդհատ համեմատություններ անցկացնելով՝ կրկին անդրադարձ կատարել ուսումնասիրվող աշխարհագրական օբյեկտների և հայրենի երկրի, տարածշրջանի ու բնակավայրի համարժեք աշխարհագրական օբյեկտներին: Եվ այսպես դպրոցական աշխարհագրության ամբողջ դասընթացի ընթացքում հայրենագիտական **բաղադրիչը** պետք է կարմիր թելի նման ձգվի, որի շուրջը պետք է կառուցվեն աշխարհագրական համապարփակ գիտելիքները: Մեր հայրենի երկրի ռելիեֆի, բնակլիմայական պայմանների խիստ բազմազանությունը մեզ ընձեռնում է այդ հնարավորությունը:

Դպրոցական աշխարհագրության մեջ հայրենագիտական ուղղվածություն ունի հատկապես „Հայաստանի աշխարհագրություն,, դասընթացը և կոչված է Հայաստանն ուսումնասիրել որպես մեկ բնապատմական, ազգային-պետական ու տնտեսական-մշակութային ամբողջություն, որպես հայերի բնօրրան ու հայրենիք: <<Հայաստանի աշխարհագրություն>> դասընթացի կարևորագույն նպատակն է դպրոցականին՝ ապագա պետական գործչին, ճարտարագետին ու ֆերմերին, բանվորին ու առևտրականին, հաղորդել բազմակողմանի ու համակարգված գիտելիքներ պատմական Հայաստանի սահմանների, բնության, ՀՀ բնական պայմանների ու հարստությունների, բնակչության ու տնտեսության, հասարակության այսօրվա կյանքի, արտաքին ու ներքին տնտեսական կապերի,

հեռանկարային զարգացման հնարավորությունների, ժամանակակից աշխարհում նրա տեղի ու դերի մասին: Այն կոչված է լրացնելու ՀՀ հանրակրթական դպրոցի աշակերտների աշխարհագրական, ինչպես նաև հայագիտական ու հայրենագիտական գիտելիքները՝ ճանաչելի դարձնելով սեփական հայրենիքի աշխարհագրական առանձնահատկությունները, զարգացնելու շրջակա միջավայրի և այնտեղ ընթացող բնական ու հասարակական երևույթների բազմաբնույթ կապերը, դիտարկելու, վերլուծելու և գնահատելու որոշակի կարողություններ: Դասընթացը հնարավորություն է ընձեռնում Հայաստանի Հանրապետության մեջ ավելի մոտ ու մատչելի տարածական երևույթների օրինակով խորացնել աշակերտների ընդհանուր աշխարհագրական պատկերացումները և կարողությունները [2, էջ 8-9]:

Աշխարհագրական-հայրենագիտական աշխատանքները աշակերտների մոտ զարգացնում են ինքնուրույն գործունեություն ծավալելու կարևոր հմտություններ: Այդ աշխատանքները լայն հնարավորություն են ընձեռնում սովորողների մեջ դաստիարակելու ընկերասիրություն, մարդասիրություն, համակեցություն, փոխադարձ հարգանքի, իրար օգնելու մարդկային բարձր արժեքներ, ինչպես նաև համատեղ նախագծեր կազմելու, հետազոտություններ իրականացնելու կարողություններ:

Ներկայացվում է նախագծային տեխնոլոգիայով մշակված հայրենագիտական դասի պլան, որը նպատակահարմար է կիրառել 9-րդ դասարանում, երբ սովորողներն արդեն ծանոթ կլինեն իրենց մարզին:

Մանկավարժական նախագծային մեթոդն ուսուցման հատուկ եղանակ է, որը կենտրոնանում է որևէ խնդրի շուրջ: Առաջադրանքը ոչ միայն խնդիրը լուծելը կամ այն ընտրելն է, այլև դրան իրական կյանքում սերտորեն փոխկապակցված հնարավորինս շատ հայեցակետեր բացահայտելը: Յուրաքանչյուր նախագիծ յուրօրինակ և անվերջ է, քանի որ խնդիրները վերացական հասկացություններ չեն, այլ վերցված են իրականությունից: Չկա երկու նմանատիպ նախագիծ, քանի որ մասնակից աշակերտները, ուսուցիչները և հանգամանքները մշտապես տարբեր են: [8]

Նախագծային մեթոդը պահանջում է աշակերտների աշխատանքի գիտակցված ծրագրում: Ծրագրումը կատարվում է երկու տարբեր մակարդակներով: Առաջին մակարդակը վերաբերում է ամբողջ գործընթացին, որի ընթացքում նախատեսվում է, որ աշակերտին կներկայացվեն որոշակի գիտելիքներ և կզարգացվեն որոշակի կարողություններ: Երկրորդ մակարդակը ենթադրում է անհատական նախագծերի ծրագրում, որի համար անհրաժեշտ է ուսուցչի կողմից շահագրգռվածություն և օժանդակության ցուցաբերում: Անհրաժեշտ է նշել, որ այս դեպքում խոսքի հմտությունները գերիշխող չեն, և տարբեր կարողություններ ունեցող աշակերտներ հավասարապես մասնակցում են համատեղ ընտրված խնդրի լուծմանը: Թեև ուսուցիչները և աշակերտները շարունակում են տարբեր դերակատարում ունենալ, այս մեթոդի աշխատանքների իրականացման համագործակցային բնույթն ապահովվում է նրանով, որ ուսուցչի ղեկավարման դերն աննշան է, նա գործում է գրեթե աննկատ, իսկ համագործակցությունն իրականացվում է միայն համատեղ պլանավորման, գործողությունների և գնահատման միջոցով: Առաջադրանքների բազմազանությունն աշակերտներին հնարավորություն է տալիս դրանց մասնակցելու տարբեր ձևերով: Աշակերտները կարող են աշխատանքի իրենց բաժինն ընտրել ըստ իրենց նախկին փորձի, ունակությունների և հավակնությունների՝ առանց ուսուցչի կողմից որևէ մեթոդաբանության կիրառման [6, էջ 4]:

Նախագծային մեթոդն առաջարկում է ավելին, քան ավանդական կրթության և դպրոցի շրջանակը: Այն կենտրոնանում է առօրյա կյանքի խնդիրների վրա և կարևորում մասնակիցների փորձառությունը:

Նախագծային մեթոդի կիրառումը հնարավորություն կտա աշակերտներին որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրության արդյունքում գործնական խնդիրների և առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնարդյունքի տեսքով [7]:

Այս աշխատանքը կօգնի սովորողների մոտ նպաստավոր պայմաններ ստեղծել հետևյալ կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման համար.

1. Ռեֆլեկտիվ հմտություններ

2. Որոնողական, հետազոտական հմտություններ
3. Համագործակցային հմտություններ
4. Կառավարման կարողություններ, հմտություններ
5. Շնորհանդեսների պատրաստման հմտություններ
6. Ներկայացման հմտություններ [3, էջ 6]:

Աշխատանքն իրականացվելու է որպես **գործնական կողմնորոշիչ նախագիծ**, այսինքն ուսումնասովանողակ նյութի ստեղծում իրենց բնակավայրի վերաբերյալ: Տվյալ աշխատանքը նպատակահարմար է կատարել խմբերով, որովհետև խմբային աշխատանքն ընթացքում դրսևորվում են խմբի անդամների անհատական առանձնահատկությունները, միաժամանակ ձևավորվում են խմբի անդամին հատուկ կարողություններ՝ համագործակցելու, դիմացինին լսելու և հարգելու:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈԻԼԵՐԸ

Նախագծի աշխատանքների իրականացման համար որպես ժամկետ կարելի է սահմանել մեկ ամիսը:

1. **Նախագծային թեմայի ընտրություն.** բնակավայրի ֆիզիկաաշխարհագրական և սոցիալ –տնտեսական համալիր բնութագիրը:

Ուսուցիչ գործունեությունը– Ուսուցիչը ներկայացնում է նախագծի թեման, առաջարկում է նախագծի հիմնախնդիրը, ձևակերպում նպատակներն ու խնդիրները:

Աշակերտների գործունեությունը – Աշակերտներն իրականացնում են հիմնախնդրի ընկալումը, իրադրության մեջ հարմարվելը, կոնկրետացնում նպատակներն ու խնդիրները:

2. Թեմայի տրոհում ենթաթեմաների. Թեմայի տրոհումը ենթաթեմաների պետք է իրականացնել աշակերտներին արդեն ծանոթ հերթականությամբ, այսինքն այնպես, ինչպես ուսումնասիրել են մարզերը.

- 1) Բնակավայրի աշխարհագրական դիրքը
- 2) մակերևույթը և օգտակար հանածոները
- 3) կլիման
- 4) ներքին ջրերը
- 5) հողերը, բուսականությունը, կենդանական աշխարհը
- 6) բնակավայրի պատմությունն ու բնակչությունը
- 7) տնտեսությունն ու զարգացման հեռանկարները

3. Նախաձեռնող խմբերի ձևավորում. Ելնելով ենթաթեմաների թվից, նպատակահարմար է դասարանը բաժանել 7 խմբի:

Ուսուցչի գործունեությունը – Ուսուցիչը կազմակերպում է նախագծի գործունեությունը, առաջարկում է կազմավորել խմբեր, բաշխել աշակերտների դերերը խմբերում, պլանավորել նախագծի գործունեությունը և պրեզենտացիայի հնարավոր ձևերը:

Աշակերտների գործունեությունը – Աշակերտները իրականացնում են խմբերի բաժանումը, բաշխում են դերերը խմբում, պլանավորում աշխատանքը, ընտրում արդյունքների և պրեզենտացիայի ձևերն ու եղանակները:

4. Տեղեկատվության հավաքագրում. Տեղեկատվության հավաքագրման համար նպատակահարմար է օգտվել դաշտային հետազոտության, քարտեզագրական, վիճագրական մեթոդներից:

Ուսուցչի գործունեությունը – Ուսուցիչը տեղեկատվության որոնման գործին չի մասնակցում: Նա խորհրդատվություն է տրամադրում, հսկում է խմբերի աշխատանքը, տալիս նոր գաղափարներ, կատարում պրեզենտացիայի փորձեր:

Աշակերտների գործունեությունը – Աշակերտներն աշխատում են ինքնուրույն, ակտիվ, յուրաքանչյուրն իր դերով, խրհրդակցում են իրար հետ, որոնում և նախապատրաստում են նյութեր պրեզենտացիայի համար:

5. Հետազոտական հաշվետվության նախապատրաստում. Այն կարող է ներառել սահիկահանդեսներ, իրենց կողմից պատրաստված փոքրիկ տեսաֆիլմեր, պաստառներ, բնակավայրի հատակագիծն ու տեղագրական քարտեզը, այլ թեմատիկ քարտեզներ:

Ուսուցչի գործունեությունը – Ուսուցիչը կատարում է դիտումներ, անհրաժեշտության դեպքում աշակերտներին խորհուրդներ է տալիս, նախապատրաստում է նախագծի պաշտպանությանը:

Աշակերտների գործունեությունը – Աշակերտները կատարում են հետազոտություններ, վերլուծում են տեղեկությունները, աշխատում նախագծի վրա, փորձեր են անում, պատրաստվում նախագծի պաշտպանությանը:

6. Նախագծի պաշտպանություն /պրեզենտացիա/

Ուսուցչի գործունեությունը– Ուսուցիչը նախագծի ներկայացումը կարող է կազմակերպել բաց դասի տեսքով, որի ժամանակ ներկաները լսում են աշակերտներին, հարցեր ուղղում, անհրաժեշտության դեպքում ուղղորդում, գնահատում են նրանց կատարած աշխատանքի որակը և նախագծի ինքնատիպությունը:

Աշակերտների գործունեությունը – Աշակերտները ներկայացնում են ուսումնական նախագիծը, մասնակցում են խմբային վերլուծությանը, արդյունքների գնահատմանը:

Հակիրճ ներկայացնենք, թե ինչպես է նպատակահարմար կատարել յուրաքանչյուր **ենթաթեմայի** ուսումնասիրությունը:

1) Բնակավայրի աշխարհագրական դիրքը

Սկզբում որոշում են բնակավայրի աշխարհագրական լայնությունն ու երկայնությունը: Դա առանց դժվարության կարող են անել համացանցի միջոցով, բայց ցանկալի է, որ այն կատարեն իրենք՝ գործնական աշխատանքի միջոցով, հատկապես, եթե այդ աշխատանքն իրականացնելու համար բարդ գործիքներ ու սարքեր պետք չեն: Դրա համար անկյունաչափի օգնությամբ որոշում են, թե ինչպիսի անկյան տակ է իր բնակավայրից երևում Բևեռային աստղը: Այդ անկյունն էլ կլինի տեղի աշխարհագրական լայնությունը [5, էջ 186]:

Տեղի աշխարհագրական երկայնությունը որոշելու համար անհրաժեշտ է օգտվել $J=N+R$ բանաձևից, որտեղ J -ն աշխարհագրական երկայնությունն է, N -ը տվյալ վայրի ժամային գոտու համարն է, R -ը գոտիական և տեղական ժամանակների միջև եղած տարբերությունն է: Այս բանաձևից օգտվելու համար անհրաժեշտ է իմանալ Գրինվիչի ժամանակը: Հայտնի է, որ յուրաքանչյուր ժամային գոտի ընդգրկում է 15° , որը հավասար է մեկ ժամի: Հայաստանի Հանրապետությունը գտնվում է 3-րդ ժամային գոտում, այսինքն Գրինվիչի նկատմամբ 45° արևելք է, բայց դա վերաբերում է ողջ հանրապետությանը: Եթե ցանկանում ենք որոշել մեր բնակավայրի աշխարհագրական երկայնությունը, պետք է իմանալ՝ այնտեղ ժամը քանիսն է, և համեմատել Գրինվիչի ժամանակի հետ, իմանալով ժամային տարբերությունը՝ այն վերածում ենք աստիճանների: Ստացված տվյալը կլինի բնակավայրի աշխարհագրական երկայնությունը: [1, էջ 306]

2) Մակերևույթը և օգտակար հանածոները

Աշակերտները էքսկուրսիաների և արշավների ժամանակ, ինչպես նաև քարտեզներով, գրքերով կամ համացանցի միջոցով ուսումնասիրում են իրենց շրջանի մակերևույթը, նրա երկրաբանական պատմությունը, հավաքում են տվյալներ օգտակար հանածոների մասին: Նրանք իրենց պատրաստած ներկայացման մեջ կարող են ներառել.

1. մակերևույթի համառոտ բնութագիրը,
2. բնակավայրի մի քանի կետերի բացարձակ բարձրությունները,
3. ռելիեֆի աչքի ընկնող ձևերը,
4. երկրաբանական մերկացման սխեման,
5. օգտակար հանածոների նմուշների լուսանկարներ
6. մակերևույթի խոշոր ձևերի տնտեսական օգտագործման առանձնահատկությունների նկարագրությունը:

3) Կլիման

Աշակերտները ուսուցչի օգնությամբ կարող են կատարել օդերևույթաբանական դիտարկումներ, իրենց բնակավայրի կլիմայի վերաբերյալ գրական աղբյուրներից, համացանցի եղանակացույցներից հավաքում են տվյալներ, կատարում են ընդհանրություններ և հետևություններ: <<Բնակավայրի կլիման>> ցուցադրության մեջ խմբի աշակերտները կարող են զետեղել՝

1. կլիմայի համառոտ բնութագիրը,
2. ըստ ամիսների եղանակի բաշխումը ցույց տվող դիագրամը և յուրաքանչյուր եղանակի համառոտ բնութագիրը,
3. ջերմաստիճանի ընթացքի տարեկան գրաֆիկը, որի տակ մակագրում են բնակավայրի միջին տարեկան ջերմաստիճանը, նվազագույն և առավելագույն ջերմաստիճանները, ջերմաստիճանի լայնությունը
4. կլիմայական պայմանների ազդեցության գնահատականը բնակչության կենցաղի և արտադրական գործունեության վրա:

4) Ներքին ջրերը

Երեխաները հետազոտում են բնակավայրի ներքին ջրերը, եթե մոտիկ գետ է հոսում, ապա ավելի մանրամասնորեն նկարագրում են գետը: Ուսուցչի ուղեկցությամբ կարող են կազմակերպել էքսկուրսիա դեպի գետի ափ, չափել գետի լայնությունն ու միջին խորությունը, հոսքի արագությունը, իսկ ստացված տվյալներով որոշել գետի ջրի ծախսը և օրական հոսքը: Ենթաթեմայի ցուցադրության մեջ կարող են զետեղել.

1. բնակավայրի տարածքի ջրագրական ցանցի քարտեզը
2. գետերի, աղբյուրների, լճերի, լճակների նկարագրություններն ու լուսանկարները
3. ջրագրական ցանցի տնտեսական նշանակության գնահատականները:

5) Հողերը, բուսականությունը, կենդանական աշխարհը

Այն աշակերտներին, որոնք կհետազոտեն հողերը, կարելի է առաջարկել որոշել դրանց մեխանիկական կազմը: Դրա համար վերցնում են հողերի նմուշներ 20-25 սմ խորությունից և կատարում են տարբեր տեղերից վերցրած հողերի նմուշների պարզագույն անալիզ, այս ինքնորոշում են, թե հողում ինչքան ջուր, հումուս, կավ և ավազ է պարունակվում: Անալիզի համարվերցնում են 100գ հող և, բարակ շերտով փռելով թավայի վրա, մի ամբողջ գիշեր դնում են տաքացված վառարանի վրա: Առավոտյան կշռելով հողը՝ իմանում են, թե ինչքան ջուր է եղել նրա մեջ: Եթե չորացված հողը բովենք այնքան ժամանակ, մինչև դադարի նրանից ծուխ անջատվել, և նորից կշռենք, կարելի է իմանալ, թե ինչքան հումուս է եղել նրա մեջ: Դրանից հետո հողը լցնում են ջրով լի բանկայի մեջ և լավ թափահարում: Հենց որ ավազը նստի հատակին, դատարկում են պղտոր ջուրը և լցնում են մաքուրը ու նորից թափահարում: Դա կրկնում են այնքան ժամանակ, մինչև ջուրը այլևս չպղտորվի: Բանկայում մնացած ավազը չորացնում են և կշռում: Այսպիսի անալիզի հետևանքով կարելի է պարզել տվյալ հողում ինչքան ջուր, հումուս, ավազ և կավ կա(տոկոսներով) Այս պարզ փորձի միջոցով կարելի է դատել հետազոտվող հողերի որակի մասին[5, էջ 191]:

Բնակավայրի մոտակայքում անտառի առկայության դեպքում բուսականությունը հետազոտող աշակերտները առաջին հերթին նկարագրում են անտառը, որից հետո մնացած լանդշաֆտների բուսական աշխարհի բնութագրերն են տալիս: Աշակերտներին կարելի է առաջարկել կազմել տնտեսության մեջ օգտագործվող բույսերի և դեղաբույսերի ցանկը, կիրառման ոլորտները:

Բնակավայրի կենդանական աշխարհն ուսումնասիրող աշակերտները կարող են կազմել կենդանաաշխարհագրական քարտեզ և նրա վրա համապատասխան

պայմանական նշաններով ցույց տալ այս կամ այն վայրերում բնակվող կենդանիներին: Բնակավայրի շրջակայքում կենդանիների տարածման մասին տեղեկությունները եխաները կարող են ստանալ սեփական դիտարկումների հիման վրա, տեղի բնակիչներից, ինչպես նաև համացանցից:

6) Բնակավայրի պատմությունը

Բնակավայրի պատմությունն ու սումնասիրող աշակերտների նկարել է առաջարկել առաջադրանքը կատարել ու հետևյալ հերթականությունը.

1. բնակավայրի առաջացման ժամանակը,
2. բնակավայրի անվան ծագումնաբանությունը,
3. տեղեկություններ բնակավայրի բնակչության, նրանց զբաղվածության, կենցաղի մասին
4. բնակավայրի և հարակից տարածքների տեսարժան վայրերը՝ բնական և պատմամշակութային հուշարձանները:

7) Բնակավայրի զարգացման հեռանկարները.

Այս ենթաթեման ուսումնասիրող աշակերտները առաջին հերթին պետք է հասկանան, թե ինչ գործոններ են ազդել բնակավայրում տնտեսության այս կամ այն ճյուղի ձևավորման վրա, որպեսզի կարողանան հետևություններ և կանխատեսումներ անել դրանց հետագա զարգացման վերաբերյալ: Աշխատանքը կարելի է կատարել հետևյալ հերթականությամբ.

1. տնտեսության զարգացման նախադրյալները
2. տնտեսության զարգացման հիմնախնդիրները
3. տնտեսության զարգացման հեռանկարները

մարդու տնտեսական գործունեության ազդեցությունը բնակավայրի շրջակա միջավայրի վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ տագոտական աշխատանքի ամփոփումից կարող ենք **եզրակացնել**, որ աշխարհագրության դասավանդման գործընթացում հայրենագիտական սկզբունքի կիրառումը նախագծային տեխնոլոգիայի միջոցով հնարավորություն կտա բարձրացնել առարկայի դասավանդման արդյունավետությունը, կօգնի որպեսզի աշակերտների մոտ զարգանա **սովորել սովորելու կարողունակությունը**, այսինքն՝ իրենց մեջ մշակեն այնպիսի ունակություններ, կարողություններ, կամային որակներ, որոնք հնարավորություն կտան գիտելիքներ ձեռք բերել նաև ինքնուրույն, ստեղծագործական աշխատանքի միջոցով, սովորելու ընթացքում ձևավորեն իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու,

ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խ.Սարգսյան «Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա», Երևան, 2002, 321 էջ:
2. Աշխարհագրություն և Հայաստանի աշխարհագրություն առարկաների չափորոշիչներ և ծրագրեր, Երևան 2008, 51 էջ:
3. Աշխարհագրություն և Հայաստանի աշխարհագրություն առարկաների չափորոշիչներ և ծրագրեր, Երևան 2021, 128 էջ:
4. Բնագիտություն 5-6, ուսուցչի ձեռնարկ, Երևան 2013, 95 էջ:
5. Ն. Ա. Մաքսիմով „Ֆիզիկական աշխարհագրության մեթոդական ձեռնարկ,, Երևան 1979, 195 էջ:

6. «101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար»,
Բուդապեշտ 2006 թ., 63 էջ:
7. https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AE%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4
8. https://www.canva.com/design/DAE3rw7H5_Q/view?utm_content=DAE3rw7H5_Q&utm_campaign=designshare&utm_medium=link&utm_source=viewer&fbclid=IwAR1A_QJuKckGYjctW_PRdFAQJTtjI7beW0zPo2jftOJu5Fg3nnoRliUCBE#7